

«Ի ծայրս աշտարակի պարսպին, զՄիւրեքեարն վարսել կհրամայէր Արամ. իսկ Արշակունեաց բազմամարդութեան ժամանակ քաղաքն էր ի ստորոսս բլրոյն արեւելեան հարաւէն դէպ յարեմուտս սարածուած, ընդ որ Արաօխ կանցանէր, մինչ ի հիւսիսային արեմտեան բազուկը կիրկարէր, որ կհայի արդարեւ ուղղակի Արուանդակերօտի և Արուանդաշատի վրայ յարեմօից, ուր փոխադրեց Արուանդարքունիքը թէ գետի տեղափոխութեան համար, և թէ պատերազմի յարմար պատասնի չհամարելով:

Այս բազկի առագարում է ուխտատեղին Սուրբ Գաւթի, զոր կյիշատակէ Շահխաթունեան յԲ, հատոր եր. 30, ուր և հիմունք կերեին շինուածոյ հնոյ քաղաքին, որոյ համար յառաջ գրեցինք:

ԱՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ.

**ՏԻՐԱՆ ՎԱՐԳԱԿԵՏ**

Անծանօթի հարեւաքեր ժ. ԵՂ. ԴԱՐՄԱՆ.

Տիրան վարդապետ անծանօթ էր ազդին մատենագրաց կարգը. ուստի և նորա հեղինակութիւնները աւելի անծանօթ ազգիս զրականութեան մէջ:

Սորա նշանակեալ հեղինակութիւնը որ ի ներքոյ, կայ սուրբ Աթոռոյս գրատանը, և մի քանի օրինակներ են, որպէս և կյիշատակուի ի ցանկս նիւթոց ճշարտութեաց անդ:

Աւրիշ ժամանակ պատահեալ կունենանք սուրբ Աթոռոյ գրատան վրայ ընդարձակ տեղեկութիւն տալ հանդերձ քանի մի

ձեռագրաց ծանօթութեամբ. իսկ ասա Տիրան վարդապետի վրայ ինչ ինչ դրքերէ տուած ծանօթութիւններս մի առ մի կը նշանակեմք հանդերձ նորա մատենագրութեան վրայ մեր գրած ծանօթութիւն ներով, որ ժամանակաւ յառաջ գրած եմք զբարսա ըստ այոմ:

«Ի խնդիր են յազգիս միշտ արդիւնաւոր վատակք զրականութեան նախնեաց մերոց հարց. որովք լուսաւորութեան ազդին հիմն եղաւ ի Ալուսաւորչացն մերոց թարգմանչաց, և որ յետ նոցին ի նոյն հետեւողաց՝ յիմաստից նոցին զարգացմունս, մանաւանդ որ յոսկիդէն գրչաց երջանիկ մատենագրաց ազգիս անկորուստ մեզ հասին: Տինա և որոց անգիւտ ցարդ մնացեալ անմատոյց ի բանասիրաց յանկիւնս ուրեք մերոց հայրենեաց, նոցին անուամբն և եթ ճոխանայք:

Յայգպիսեաց են սակի և այնօրիկ, որոց հազուադիւտ գաղափարք միամտութեամբ աղանւոյ աւանդեալ ի մերայնոց յազգայինս զրականութեան նենգողացն ի ձեռքո, ի խոյզ և ի խնդիրն լինել նոցա, ցորչափ նոցին տպագրութեամբն յղիւանան, որք գրաւոր հարստութիւնքն են ազգիս, նոյնչափ և զազգս մեր նախագոն իբրու չգիտողս ոմանս յարգ և զարթէք յիշատակաց հայրենի հարստութեանց. և այս հաւասարակշիռ հատուցմունք նոցա այն այն երախտագէտ սրտից առ ի նոցանէ՝ ի արիտուր փոխարինի մերոց բարեսիրացն ձեռնտուութեանց բարեպաշտական դիտումք յանմահութիւն գործոց ի վայելս ազգիս:

Իայց գիտէ աշխարհ, թէ Հոյք չեն անդրագէտք և անմեծարուք նախնեացն

Թղթոց, այլ որք նշխարելին նենդողաց զյիշատակս ինչ զբաւոր հուրթեանց, եւ անդ էր այն ազգապէր ոգւոյ վանն ազգի օգտին նուիրեալ. բայց իբրև դրոցին մեր և համազգայինն ի մէջ օժանդակեալ գործովն, զգործ նոյն՝ յանգրապիտութիւն մեզ ի վեր երևեցոյց, բացաւ և առաջատար նենդութեանն. և ահա յայն վայրկեան զառաջինն ազգական ոգւով հայրենասիրութեան ազգասէրքն մեր ի ցոյցս մեծարանաց նախնեացն մատենագրութեանց, Թող զանցեալն առաջինս՝ ածին մուծին ի տիպ երէկ և այսօր զԱբէսու եպիսկոպոսի պատմագրութիւն և Տանն Արծրունեաց զԹովմային Արծրունաց, որպէս զի մի ևս անկցին այնոքիկ զաւոզացն ի ձեռս. որոց մատենաք ոսկեզօծելովքն եղիւրք ակորժակս գրասիրաց մանկուոյն գարթուցեալ, զգանձս ազգիս նման աղբեր գանձնն ի մթեր, և զի հայրենասիրացն այնոցիկ ձաշակ մատուցեալ ազգայնոց ազգային մատենագրութեան, յուսանցին և ակնկալեացն հասանել մերոյ ազգիս գրատպութեամբք, ըստ որոյ գուցէ և ընտիր և հազուագիւտ գաղափար դրոց մնացեալ աակաւին ի ձեռադիրս՝ յանապատս և ի վանօրայս ազգին, ոչ անխնամ անպահովեցնն յայսմ հեռէ յուսով տպագրութեանց համազգային ձեռնտուութեամբք:

Մատենագրութիւն Տիրանայ վարդապետի է պատասխանի հարցմանց Թաղաւորացն Աղուանից Աարներսեհի և Փիպէի. գործ գորով սորա մի յընտիր մատենագրութեանց նախնեաց, է շարայարեալ յոճ միջին դարու, որպէս Թուր, առ ժամանակօք երջանկայիշատակ չայրապե-

աց Յովհաննու Օճնեցւոյ և Յովհաննու Վրասխանակերտցւոյ՝ և այլոց սոցին ժամանակակցաց. համառօտադիր ըւստբանութիւն մթին և խորհրդական տեղեաց շին և Աոր Արամկարանաց Տ՛ԾԻ պարբերութեամբ ի ստեղծագործութեանէ աշխարհի մինչև ց՝ամբարձումն Տեառն հանդերձ յառաջարան Թղթով՝ առ նոյն Թաղաւորան Աղուանից. յորոց հայցուածոցն հարցմանց՝ ստիպեալ է գրել սուրբ վարդապետն ըստ իւրումն վկայութեան, որպէս տեսցի ի յառաջարանին:

Յանկալի էր յոյժ, եթէ և զհարցմունքս թագաւորացն կից ընդ պատասխանեաց գնէր սուրբ վարդապետն. մի զի վասն կարեւոր իրաց լինելով խնդիրքն՝ գրասէր ոգւոց նոցին եղձ ծանօթ լինէին յեռագայիցս. և միւս՝ զի ի նոցունց հարցմանցն բանից՝ իցէ թէ կարողանայաք հաւաստել զժամանակ մատենագրելոյ հեղինակին զայս գործ. ըստ որում օրինակն մեր չունի զթուական գրչութեան, և ոչ իսկ ձեռագիր մատենան, յորմէ արտագրեցաք, ուր թէ և այլուր չգտաւ, որպէս սասցաք՝ օրինակ այսր մատենի, որով գէթ զիւրին լինէր մեզ և ամենայն գրասիրաց առնուլ ծանօթութիւն զհեղինակէն, թէ յորում ժամանակի և յոր վանաց վարդապետ լեալ իցէ. զի Տիրանանուն վարդապետ ի կարգս մատենագրաց ազգիս չյիշատակէ և Միքայէլ եպիսկոպոս Սաղանդեան, որ չայոց Ակեղեցւոյն մատենագրաց անուանս ժողովեաց ի գաւազան յառաջին դարէ անտի քրիստոնէութեան մինչև 919-րդ դար:

Միայն տեղի ապաստանի ունիմք ի գիւտ ժամանակի գրչութեան մատենիս՝

զՄովսէս Ազգանկատուացի զպատմագիր  
 Աղուանից. որ ի քսաներորդ երրորդ դը-  
 լուս մատենին Վ. հատորոյ, յազգահա-  
 մարս թագաւորաց ստանն Աղուանից յի-  
 շատակէ միայն զՄարներսէհ որդի Սահլի,  
 որ ի Տոհակայ՝ Տէր Սիւնեաց, «որոյ  
 ասէ, բունազրօսութեամբ կալեալ էր ըզ-  
 զաւանն Վեղամայ,»  
 Մարներսէհիս այսմիկ որդիքին՝ Պարիզոր  
 և Աբուսէթ, որ և թոռն որ ի Վրիգորոյ՝  
 Սահակ Աւետարայ կոչեցեալ, աներ երկա-  
 թըն Աշոտոյ՝ այր քաջ. — իսկ Փիպէ ոչ  
 անդ ի կարգս Աղուանիցն թագակալաց,  
 այլ Փիլիպպէ կայ անուն թոռն յիշեարս  
 Մարներսէհի՝ որդի Սահակայ. որ և որդի  
 միւս էր նոյնպէս Մարներսէհ. — ի թէ հա-  
 ւանիմք ուղիղ դատման, թէ յանդրագե-  
 րչաց յասրաւեալ իցէ Փիլիպպէդ անուն  
 ի Փիպէ, յայժամ հաւաստեալ գտաննմք  
 զստուգութիւն իրից առ ժամանակօք  
 թագաւորին. Բազրատունեաց Արիաթն  
 Աշոտոյ, այս ինքն զժամանակ կենաց Տի-  
 լանայ վարդապետի, և խնդիր հայցուա-  
 ծոց երկուց եղբարցն՝ ժառանգաց թա-  
 գաւորութեան Աղուանից, ինորին Տիրա-  
 նայ: — Յայլում պատահի ապացւ և զա-  
 րուակն քան զայս ծանօթութիւն ի վերաց  
 արքայսրդւոցս, որոց երկ ի ի դահարքացա-  
 կան ամբարձեալ, երբ բանք իցեն մեզ ըզ-  
 Մովսէսի զԱղուանից պատմագրութեանն  
 «որոյ գրուածոյ ևս հանդիպեցաք ի  
 ձեռագիրս յաւուրս յայսոսիկ, յորում  
 ընծայի և այլ հնդեանութիւն — Հաւա-  
 տոյ թուղթ անուամբ՝ Տիրանայ վարդա-  
 պետի. զոր ընդ մերոյ վերնոյն Տիրանայ՝  
 համարիմք նոյն:»,

«Նիպալեալ զհրամանս և զխնդիրս ձեր  
 յոյժ փութով և յաւեժ ընծայի փափա-  
 գանօք ուրախ եղաք ի սնա իբրև ի պար-  
 գես և ի ձիրս երկնառաքս \*), և որպէս ի  
 հունձս կամ ի զգօնութեան ստացեալ  
 դաւեախս բարեաց ի հեռաստանէ և ի հալ-  
 անընչին կարօտելոյ, զի անչափ անբու-  
 խնարութեամբ և զանազան ընտրու-  
 թեամբ շարայարեալ էին յո՞՞՞՞ ըստ կոր-  
 զի զրեալքս առ ի ձէնջ,»  
 «Ատանօր օրհնութիւնք և գովիմք, և զոհա-  
 նամ և շնորհ ունիմ Տեառն խնոյ Յիսուսի  
 Վրիստոսի և զոր նորա բարեբարի. որ ի  
 ժամու այնչափ վտանգից և մրկիաց փքա-  
 ցելոց և ի կուտակս արեաց լեռնացելոց յա-  
 բուցելոց զկնի, մի գմբասոյ հեռագտեալ  
 բանիքս այսոքիւք վերստին երկրորդեալ  
 մտիթարէք, և յուսովն զուարձանայք,  
 արծարծեալ իբրև շեղջիւք աստուած-  
 պաշտութեամբ ասպեալ, յորում գը-  
 ղեալն է Մովսէսի ասէ, բազում արագէ,  
 զի ի ձեռն այսպիսի հարցեանց և խնդրոյ  
 լուսաւորին մտք իբրև վճիռօր, և խնդրէ  
 զերբ իկից և զօն արիք գնասցուքն, և  
 տէր շատ է ինձ, շատ է ինձ յիշատակ վրա-  
 նացն Արիստու, և վկայ այժմ ասելն, զի  
 պատուիրանք նորա լոյս են, զի Տէր մեր  
 ահա ասէ, քննեցէք. զի կոյր է ասէ, որ  
 ո՛չ զիտէ զզիր. ակէր զպատուիրանս քո  
 սիրելցի. ակէր սղոթմութեամբ քով լուր  
 ինձ, քան զպապկոն ասաց հրամանն սի-  
 ղել զնա, և արկ ասէ, ի պարանոց քո,  
 զի ըսէ ասէ, զվաճառն զայն գտանել. որ  
 զառաջնորդութիւն ասէ, խնդրէ, ի միս

(\*) Ընթերցուածք բնագրին տներ աստ և  
 որպէս որք բաժանեն զՍ.

առնցէ զառակս և զբանս խորինս: ըստ Պետրոսի տալ նմա ում պիտոյ իցէ: զիտեսասէ, զգիրս սուրբս, որ կարող են մխթարել: զրեալ է, բազումք անանց գրոցընտրողութեան ձգնեալք, ոչինչ օգտեցան: զե ասացին սուրբ հարքն, ամենայն առաքինութեան զաղխութիւն, որոշութեամբ խաղասցուք, ապա գնասցուք ընթացուք անդրէն յո՞՞ կարգի հարցմանցն ձերոց, զոր հանդերձեալ է մեր արկանել ճառս և լուծմունս ի վերայ նոցա: ,

**ԲԱՐՈՅԱԿԱՆ**

ՄԻ ԲԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԵՆ ՎԵՐԱՅ:

Ներկար ժամանակ է, որ գիշեր և ցերեկ անդադար խիղճս տանջում և սախում է ինձ, մեր հոգեորականութեան վերայ ձիշտ նկատողութիւն անելով, հանել ի լոյս ճշմարտութիւնը, որն որ մի քանի նորահաս մտքերից հայտնվում է, և խնդրել ձեզ, որ դուք ևս գործակից լինելով ինձ, ձեր պատուական Նրարատ լրագրի մի անկիւնում տեղի տալ սորա:

Փորձը արդէն հաստատում է, որ իւրաքանչիւր արհեստականք ունենում են իւրեանց մէջ թէ յայտնի և թէ ծածուկ ատելութիւն, ծագուած զանազան պատճառներից: Իսկ մի քանի աշխարհականաց զէպ ի հոգեորականութիւն ատելութիւն ունենալն զարմացնում է ինձ, որ սոքա փոխանակ միմեանց հետ սիրոյ և կատարեալ հոգեոր միութեան սկսում

են ատելով ատել մեր խնկիւն հոգեորականքը:

Օրինակի համար, եթէ սոքա (աշխարհականք) մի անարգ և սգէտ հոգեւորականի մէջ մի մասնաւոր յանցանք են նկատու մ, իսկոյն ոչ միայն փոզոցներում, հրապարակներում, այլ նա և լրագրի ներքի մէջ, զանազան ազգերի առաջև, արձանացներով այդ յանցանքը, արտարակուս են ոչ միայն յանցաւորին, այլ ընդհանուր հոգեորականութեան, պահանջելով դոցանից կատարեալ իմաստութիւն, կատարեալ սրբութիւն և միանգամայն հրեշտակային վարք, վասն զե հոգեորական էն: Իսկ իւրեանց ամենամեծ պահանջութիւնները և յանցանքը ծածկելով զբուսնի տակ համարում են ներքի, վասն զե աշխարհական էն:

Պարզ է, որ այսպիսի պահանջը մի քանի մարդոց ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ատելութեան ոգի ծագուած Ինքնագոչութիւնից, վասն զե այդպիսիք ինչպէս փորձը ցոյց է տալիս, որ կամ իւրեանք միմիայն իւրեանց կատարեալ ուսման և հոգեորականութեան արժանի հոգեորական կարծելով, մի ամբարտաւանութեան և անհնազանդութեան հոգւով, ցանկանում են իւրեանց աթոռը բարձրացնել հոգեորականութեան աթոռից, և կամ անհետարեւոյնից, վասն զե դոքա կողմնակի կերպիւ կարգալով միմիայն օտար ազգի Նկիզիցական Պատմութիւնները, կարծում են թէ շայոց հոգեորականք նոյն ընթացքով և ուղղութեամբ են վարուել ազգի հետ, ինչպէս նոքա: Ուստի ինձ պարտաւոր եմ համարում պատասխանել այս հարցմանս: